


ՀԱԿԻՐԸ ՀՏՉ-Ի և ՄՆՏ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

15 դեկտեմբերի 2015թ.

- ՀՏՉ-ի մասին
- ՄՆՏ ճրագրի մասին
- ՄՆՏ ճրագրի 1-ին Բաղադրիչի մասին
- Արդյունքներն առ դեկտեմբերի 15, 2015թ.
- ՄՆՏ ճրագրի 2-րդ Բաղադրիչի մասին
- 2-րդ Բաղադրիչի փուլերը
- Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

❖ **ՀՏՉ-ի մասին.** **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը** հիմնադրվել է Հայաստանի սոցիերոդրոմների հիմնադրամի վերակազմավորման հիմքի վրա՝ «2014-2025թթ. Հայաստանի հեռանկարային զարգացման ծրագրի» տարածաշրջանային զարգացման քաղաքականության շրջանակներում: Ի նպաստ ՀՏՉ-ի ձևավորման գործընթացի, Շվեյցարական համագործակցության Հարավային Կովկասի գրասենյակը հատկացվել է դրամաշնորհ՝ 287,850 շվեյցարական ֆրանկ գումարով, հիմնադրամին անհրաժեշտ տարբեր հենքային վերլուծությունների և սոցիերոդրոմների հիմնադրամի կարողությունների զարգացման միջոցառումների, այդ թվում՝ վերջինիս կառուցվածքի ուսումնասիրության և ինստիտուցիոնալ զարգացման պլանի մշակման համար:

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N91521-Ն որոշման համաձայն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին վերա-պահվել է Համաշխարհային բանկի վարկային միջոցներով աջակցվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման** ճրագրի իրականացումը: Ծրագրի ընդհանուր արժեքը 42.93 միլիոն ԱՄՆ դոլար է, որից 30 մլն ԱՄՆ դոլարը ՎՋՄԲ-ի վարկային միջոցներն են, 11.01 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը և 1.92 մլն ԱՄՆ դոլարը՝ համայնքների ներդրում-ները (տես դիագրամը):



❖ **ՄՆՏ Ծրագրի մասին.** ՄՆՏ Ծրագիրը պահպանելու է նախկինում ընդունված՝ պահանջարկի առկայությամբ պայմանավորված մոտեցումը և համայնքների ուղղակի ներգրավումը ծրագրերի նախագծման, հաստատման և աշխատանքների իրականացման մեջ: Ծրագրի ընթացակարգերը և հասցեականության մեխանիզմը լրամշակվել են, որպեսզի այն առավել արդյունավետ աջակցի առավել կարիքավոր համայնքներին, իրականացնի առաջնահերթ ենթակառուցվածքային ծրագրեր և օժանդակի տեղական

սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված միջհամայնքային փոխհամագործակցությանը: ՄՆՏ2 ճրագրի հակիրճ նկարագրությունը բերված է ստորև.

❖ **Բաղադրիչ 1. Օժանդակություն սոցիալ-տնտեսական զարգացմանը և կարողությունների զարգացմանը տեղական մակարդակով:** Այս բաղադրիչի ներքո կիրականացվեն անապահով համայնքների առաջնային կարիքների բավարարմանը միտված միկրոճրագրեր, որոնք կընտրվեն երկփուլ ռազմավարությամբ. առաջին փուլում կորոշվեն մարզերին հատկացվող գումարների չափերը, իսկ երկրորդ փուլում ամենակարիքավոր/ խոցելի համայնքները կընտրվեն քարտեզագրման արդյունքում՝ սոցիալական, ժողովրդագրական, տնտեսական, ֆինանսական, աշխարհագրական և ենթակառուցվածքային պայմանների հետ կապված չափանիշների կատարված դասակարգման հիման վրա: Կֆինանսավորվի մոտ 120 միկրոճրագիր, ընդգրկելով կրթօջախների (մանկապարտեզներ, տարրական, միջնակարգ և հատուկ դպրոցներ) վերականգնումը, առողջապահությունը (առաջնային առողջապահական հաստատություններ), համայնքային կենտրոնները, ջրամատակարարման և կոյուղու համակարգերը և այլն: Նախատեսված է նաև վերանորոգված ենթակառուցվածքներն ապահովել կահույքով և սարքավորումներով: Այս բաղադրիչի շրջանակներում, տեղական ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունների հետագա զարգացման համար, հիմնական շահառուները (տեղական իշխանությունների պաշտոնյաները, ավագանիների անդամները, համայնքի ղեկավարները և այլն) կվերապատրաստվեն ֆինանսների և ակտիվների կառավարման, բյուջետավորման և այլ ոլորտներում:

❖ **ՅՏՅ-ի գործունեության արդյունքներն առ 2015թ. դեկտեմբերի 15-ը.** ՄՆՏ2 ճրագրի 1-ին բաղադրիչի ներքո հիմնադրամը 10 մարզերի շահառու համայնքներից ստացել է միկրոճրագրերի իրականացման 36 հայտեր, որոնք համաձայն ընթացակարգերի անցել են խթանման և նախնական փորձաքննության փուլերով, հայտատու համայնքներում կայացել են համայնքային ընդհանուր ժողովներ, ընտրվել են ճրագրերի իրականացման կոմիտեներ: Ներկայումս 24 հայտեր գտնվում են նախնական փորձաքննության փուլում, 3 հայտերը՝ վերջնական փորձաքննության փուլում, 4-ը՝ մրցութային գործընթացում են և 5-ում ընթանում են շինարարական աշխատանքներ: Միկրոճրագրերի համայնքների հետ կնքվել են 9 նախնական համաձայնագրեր՝ 1.2 մլրդ դրամ ընդհանուր գումարով (համարժեք՝ 2.54 մլն ԱՄՆ դոլարին): Ծենքերի և շինությունների նախագծային աշխատանքների և հեղինակային հսկողության իրականացման համար կնքվել են 6 պայմանագրեր համապատասխան լիցենզավորում և աշխատանքային փորձ ունեցող կազմակերպությունների հետ՝ 77.64 միլիոն դրամ ընդհանուր գումարով (համարժեք շուրջ 164.1 հազար ԱՄՆ դոլարին): Եվս մի պայմանագիր կնքվել է շենքերի կայունության, օդափոխության, հոսանքի և ջրի մատակարարման և դրենաժի համակարգերի փորձաքննության համար՝ 5.75 միլիոն դրամ գումարով (համարժեք շուրջ 12.1 հազար ԱՄՆ դոլարին):

❖ **Բաղադրիչ 2. Օժանդակություն միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացումների նախաձեռնություններին:** Բաղադրիչը փոխկապակցված է համայնքների խոշորացմանն ուղղված տարածքային զարգացման բարեփոխումների հետ: Միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման նորարարական նախաձեռնությունների ֆինանսավորման շնորհիվ այս բաղադրիչը կօժանդակի տարածաշրջանային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցման և ներդաշնակ տարածքային զարգացման խթանման Հայաստանի՝ 2012-2015թթ. զարգացման ռազմավարությանը: Այս բաղադրիչի ներքո կիրականացվեն շուրջ 30 ենթաճրագրեր՝ ուղղված մի քանի համայնքներում սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքի և համապատասխան ծառայությունների զարգացմանը, եկամտաբեր տնտեսական գործունեությանը աջակցելուն, անհրաժեշտ մարդկային ռեսուրսների զարգացմանը, շրջակա միջավայրի բարելավմանը: Նաև՝ այս բաղադրիչի շրջանակներում

համայնքների ավագանիների, ծրագրի նախաձեռնող խմբերի, համայնքների միությունների ներկայացուցիչների կարողությունների զարգացման նպատակով կձեռնարկվի ուսուցում՝ ներդրումների արդյունավետ պլանավորման, իրականացման և պահպանման գծով, ինչպես նաև ենթածրագրերի նախապատրաստման, իրականացման և պահպանման գործընթացների գծով:

❖ **ՄՆՏ2 Բաղադրիչ 2-ի փուլերը**

Բաղադրիչ 2-ն իրականացվում է երեք փուլերով. (i) նախապատրաստական (ii) պիլոտային, և (iii) հիմնական:

Նախապատրաստական փուլի ընթացքում Բաղադրիչ 2-ի դիզայնը բերվում է վերջնական տեսքի՝ հիմնվելով նախապատրաստական ուսումնասիրությունների եզրահանգումների վրա: Մասնավորապես, որոշվում և հաստատվում են իրականացվելիք ենթածրագրերի տեսականին, նախապատրաստման և իրականացման ցիկը, գնահատման և ընտրության չափանիշները, ֆինանսավորման և մոնիթորինգի գործընթացը և այլն:

Պիլոտային փուլի ընթացքում նախապատրաստվում և իրականացվում են 7-10 ենթածրագրեր (և ՄՆՏ2 Ծրագրի և դոնորների կողմից ֆինանսավորվող)՝ անհրաժեշտ փորձ ձեռք բերելու, բաղադրիչի դիզայնը ստուգելու և ճշտելու նպատակով: Այս փուլը կսկսվի 2015թ. երկրորդ կիսամյակում և կտևի մոտ մեկ տարի: Կփորձարկվեն ենթածրագրերի հիմնական մոտեցումները, տեսակները և մոդելները, որոնք հետագայում կարող են լայնորեն կիրառվել ամբողջ երկրում: Կփորձարկվեն նաև համայնքների խմբավորման և համագործակցության մեխանիզմները:

Հիմնական փուլը կսկսվի 2016թ.-ին՝ պիլոտային ենթածրագրերի առաջին արդյունքները ստանալուց և վերլուծելուց և բաղադրիչի դիզայնի մեջ համապատասխան ճշտումներ անելուց հետո: Հիմնական փուլի առաջին մրցույթային ցիկը կսկսվի պիլոտային փուլի սկզբից մոտ 6 ամիս հետո: Այս փուլում բաղադրիչը կտարածվի երկրի ամբողջ տարածքով՝ ֆինանսավորելով ավելի բարդ ենթածրագրեր: Այս փուլում ՅՏԶ-ն ՄՆՏ2 Ծրագրի սահմաններում ընդհանուր առմամբ կֆինանսավորի մոտ 25-30 միջհամայնքային ենթածրագրերի իրականացումը:

❖ **Համագործակցություն միջազգային կառույցների հետ.** Միջազգային կառույցների հետ բանակցություններ են ընթացել՝ նրանց տրամադրած դրամաշնորհների հաշվին Տարածքային զարգացման հիմնադրամի 2-րդ Բաղադրիչի շրջանակներում միջհամայնքային ծրագրերի ֆինանսավորման համար: Մասնավորապես՝

- Շվեյցարական միջազգային համագործակցության գրասենյակը (SDC) նախատեսում է 2.885 մլն շվեյցարական ֆրանկ դրամաշնորհի հատկացնել Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի խոշորացված 7 համայնքներում միջհամայնքային ծրագրերի իրականացնելու նպատակով:
- ԱՄՆ Մ2 գործակալության (USAID) հետ **կայացել է համաձայնություն 8.6 մլն ԱՄՆ դոլարի դրամաշնորհի հատկացնելու մասին**՝ Տարածքային զարգացման հիմնադրամի 14 պիլոտային կլաստերներում միջհամայնքային ծրագրերի իրականացնելու նպատակով:

Բացի այս դրամաշնորհներից, վարկային միջոցների հաշվին Տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով ծրագրեր իրականացնելու մտադրություն ունեն նաև այլ միջազգային կազմակերպություններ, որոնց հետ ընթացող բանակցություններին և նախապատրաստական աշխատանքներին հիմնադրամն ակտիվորեն մասնակցել է: Այսպես.

- Ասիական զարգացման բանկը (ADB) և Եվրոպական ինվեստիցիոն բանկը (EIB) նույնպես նախատեսում են իրենց ծրագրերն իրականացնել Տարածքային զարգացման

հիմնադրամի միջոցով: Այդ ծրագրերն ուղղված են Հայաստանի հանրակրթական դպրոցների սեյսմակայունության արդիականացմանը: Այդ նպատակով Ասիական զարգացման բանկը նախատեսել է 107 մլն ԱՄՆ դոլար, որ կհամալրվի Եվրոպական ինվեստիցիոն բանկի 125 մլն ԱՄՆ դոլարով:

Ներկայումս ծրագիրը անցնում է վարկային համաձայնագրի վավերացման փուլը՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

- ՀԲ-ի աջակցությամբ իրականացվող Տեղական Էկոնոմիկայի և Ենթակառուցվածքների զարգացման ծրագիրը՝ 66 մլն ԱՄՆ դոլար արժեքով, նույնպես նախատեսում է համագործակցել Տարածքային զարգացման հիմնադրամի հետ՝ ներգրավելով վերջինիս ծրագրերի իրականացման գործընթացներում:

Ծրագիրը նախապատրաստական փուլում է:

G:\ASIF IV\SILD\Briefly on SILD Project_arm.docx